



ՀԱՅՏԵՐԻ ՀՐԱՎԵՐ

ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Հայաստանում ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) Փոքր դրամաշնորհների ծրագիրը (ՓԴԾ) հայտարարում է դրամաշնորհային նախագծերի հայտերի ընդունում՝ ուղղված բնության հետ կապակցված հիմնված կանանց գործող ձեռնարկությունների ընդլայնմանը:

Նախապատմություն

25 տարի շարունակ, ՓԴԾ-ը նպաստում է գենդերային հավասարությանն ու կանանց հզորացմանը՝ որպես իր աշխատանքի կարևոր խաչաձևվող բաղադրիչ: Այնուամենայնիվ, կանայք շարունակում են մասնակցել աշխատաշուկայում տղամարդկանց հետ անհավասար հիմունքներով: Կանայք ավելի քիչ են վարձատրվում, քան տղամարդիկ, կրում են անհամաչափ պատասխանատվություն խնամքի չվճարվող աշխատանքի համար, աշխատում են խոցելի, ցածր վարձատրվող կամ թերագնահատվող աշխատատեղերում և ավելի հաճախ, քան տղամարդիկ, ներգրավված են ոչ ֆորմալ զբաղվածության մեջ:

Հաշվի առնելով, որ բնության հետ կապակցված ձեռնարկությունները, որոնք ներառում են հողը, անտառը, այգին կամ գյուղական միջավայրը, ունեն արդյունաբերության զարգացման զգալի ներուժ, և որ ՓԴԾ-ի նախագծերի մեծ մասը ներառում է ձեռնարկատիրության բաղադրիչ՝ որպես այլընտրանքային եկամուտի գործողություն, դրանցից շատերը ղեկավարում են կանայք: Այս ջանքերը ամրապնդելու համար, ՓԴԾ-ը նախատեսում է փորձարկել նորարարական ծրագիր՝ աջակցելու կանանց կողմից ղեկավարվող բնության հետ կապակցված կամ «կանաչ» գործող ձեռնարկությունների ընդլայնմանը, զինել սկսնակ կին ձեռներեցներին մոդելներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են բնության հետ կապակցված կայուն և արդյունավետ բիզնես գործելակերպերի համար և նպաստում են Հայաստանում ներառական և կայուն բիզնեսի կայացմանը:

Ընտրված նախագծերում մարդակենտրոն մոտեցման և սոցիալական նորարարության ամենաբարձր մակարդակը ապահովելու նպատակով, ՓԴԾ-ը ներգրավել է ՄԱԶԾ-ի Կուլթա սոցիալական նորարարությունների լաբորատորիան՝ հաղթող թիմերին շարունակական ինկուբացիոն աջակցություն և մենթորություն տրամադրելու համար:

Առաջնային թեմաներ

Առաջնահերթություն կտրվի այն նախագծերին, որոնք նպատակ ունեն անդրադառնալ թեմաներից մեկին կամ մի քանիսին.

- Բիզնեսի կառավարման դասընթաց
- Տեխնիկական դասընթաց

- Ապրանքի մշակման և դիզայնի դասընթաց
- Բիզնեսի զարգացման և բիզնեսի կառավարման վերաբերյալ խորհրդատվություն
- Շուկայավարման դասընթաց
- Ֆինանսական ուսուցում և ֆինանսների դյուրացում
- Ձեռներեց կանանց ցանցեր և գործարար ցանցեր՝ տարածաշրջանային, ազգային և միջազգային
- Շուկաների մատչելիություն և ստեղծում
- Ամբողջական արժեշղթայի աջակցության տրամադրում՝ ներառյալ արտադրությունն ու նյութատեխնիկական ապահովումը
- Աջակցություն մարզային սկսնակ ձեռնարկություններին և խոցելի հատվածին, ինչպիսիք են կանանց ղեկավարած տնային տնտեսությունները, միգրանտ ընտանիքները, սիրիացի փախստականները:

Նախագծերի և հայտատու կազմակերպությունների համապատասխանելիության չափանիշներ

- Կազմակերպությունը պետք է ունենա հաստատված բիզնես մոդել/ապրանք
- Կանանց կողմից ղեկավարվող փոքր և միջին ձեռնարկությունների/բիզնեսի շրջանակ
- Երկրորդ կարգի կազմակերպությունների խթանում և հզորացում, որոնք համախմբում են այլ կազմակերպություններ, ինչպիսիք են կանանց կոոպերատիվները, ինքնազբաղվածության խմբերը և ասոցիացիաները
- Խոցելի խմբերի միջև ձեռներեցության կարողությունների ստեղծման փորձ
- Ներկայացուցչություն կամ ուժեղ ցանց Հայաստանի մարզերում
- Համայնքային սոցիալական ձեռնարկատիրության փորձ
- Մասնավոր հատվածի հետ համատեղ տեղական ինկուբատորներ ստեղծելու նախաձեռնություններ
- Առաջարկվող նախագծերը պետք է լինեն համարձակ, նորարարական և վերափոխող, ինչպես նաև ունենան կրկնօրինակման և ընդլայնման ներուժ
- Առանձնահատուկ դիտարկվելու են այն ձեռնարկությունները, որոնք պատրաստ են ընդլայնմանը՝ հիմնվելով ՓԴԾ-ի հաջողված փորձի և այն նախագծերի վրա, որոնք կարող են բերել համագործակցության և լրացուցիչ ռեսուրսների մոբիլիզացմանը
- Խրախուսվում է գործընկերությունը տեղական առևտրի պալատների, արհմիությունների, խոշոր կոոպերատիվների, տեղական հասարակական-մասնավոր կազմակերպությունների և տեղական ինկուբատորների և աքսելերատորների հետ, որոնք կարող են բիզնես խորհրդատվություն ապահովել կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկություններին
- Խրախուսվում են կոնսորցիումներն ու գործընկերությունները:

Նախագծերի և հայտատու կազմակերպությունների համապատասխանելիության չափանիշներ

Նախագծերի ընտրության գործընթացը և հետագա իրականացումը համապատասխանում է ՓԴԾ-ի սահմանված չափորոշիչներին և ընթացակարգին: Հայտ կարող են ներկայացնել գրանցված ազգային ՀԿ-ներ:

Բյուջե

Ըստ ՓԴԾ-ի գործառնական ուղեցույցի յուրաքանչյուր դրամաշնորհային նախագծի առավելագույն գումարը չպետք է գերազանցի **150,000 ԱՄՆ** դոլար սահմանաչափը, որը սահմանված է ռազմավարական ծրագրի համար: Հաղթող կազմակերպության կառաջարկվի ներկայացնել

«կոշտ» և «փափուկ» միջամտությունների համադրություն, որտեղ առնվազն 100,000 ԱՄՆ դոլարը կտրամադրվի բիզնեսի զարգացմանը (գնումներ, շինարարական նյութեր, սարքավորումներ և այլն) ներդրումներ կատարելու համար և առնվազն 50,000 ԱՄՆ դոլար՝ ծրագրերի առաջընթացը խթանելու համար՝ կազմակերպչական կարողությունների զարգացման, դասընթացների, մենթորության և արժեշիջայի աջակցության միջոցով (մարքեթինգ, արտահանում, փաթեթավորում, լոգիստիկա):

Տևողությունը

Յուրաքանչյուր դրամաշնորհային նախագծի տևողությունը չպետք է գերազանցի **24 ամիսը**՝ ելնելով նախագծերի բնույթից:

Նախքան ամբողջական առաջարկի ներկայացումը ՓԴԾ Ազգային Ղեկավար Կոմիտեի քննարկմանն ու հաստատմանը, խորհուրդ է տրվում ներկայացնել ծրագրի հայեցակարգ Ազգային համակարգողին նախնական գնահատման համար:

Նախագծերի հայեցակարգերը պետք է ներկայացվեն Հայաստանում ՄԱԶԾ-ԳԷՀ ՓԴԾ Ազգային համակարգող Հովհաննես Ղազարյանի էլեկտրոնային փոստի հասցեով (hovhannes.ghazaryan@undp.org), պատճենը՝ ՓԴԾ օգնական Սվետլանա Հարությունյանին svetlana.harutyunyan@undp.org հասցեով:

Հայեցակարգերի ներկայացման վերջնաժամկետն է սեպտեմբերի 30-ը:



CALL FOR PROPOSALS ON WOMEN-LED ENTERPRISES

The Global Environment Facility's (GEF) Small Grants Programme (SGP) project opens a call for proposals supporting the expansion of existing nature-based women-led enterprises for exponential impact.

Background

For 25 years, SGP has been promoting gender equality and women's empowerment as a critical cross-cutting element of its work. However, women continue to participate in labour markets on an unequal basis with men: women are paid less than men, bear disproportionate responsibility for unpaid care work, work in vulnerable, low-paid, or undervalued jobs, and are more likely than men work in informal employment.

Given that nature-based businesses – such as those involving the land, forest, garden, or rural environment – are industries with significant growth potential and that a large portion of SGP projects include an element of entrepreneurship as an alternative income activity, many of them are led by women. To strengthen these efforts, SGP will pilot an innovation program to support the expansion of existing nature-based or “green” women-led enterprises, capacitate start-up women entrepreneurs with models and skills necessary for sustainable and effective nature-based business practices and contribute to building inclusive and sustainable businesses in Armenia.

In order to ensure highest level of human-centrism and social innovation in the identified projects, SGP has engaged UNDP's [Kolba Social Innovations Lab](#) to provide ongoing incubation support and mentorship to the winner teams.

Priority themes

Priority will be given to projects that aim to do one or more of the following:

- Business management training
- Technical training
- Product development and design training
- Business development and business management counselling
- Marketing training
- Financial training and finance facilitation
- Business women's networks and business networking – regional, national, and international
- Enabling and creating access to markets
- Ensuring support through the full value chain circle, including production and logistics
- Supporting regional startup businesses and vulnerable segments, such as women-led households, migrant families, Syrian refugees.

Project eligibility criteria:

- Organization should have an established business model/product
- A constituency of emerging women-led small and medium enterprises/businesses

- Promotion and strengthening of second tier organizations that aggregate others such as women cooperatives, self-help groups, and associations
- Experience in building entrepreneurship capacity among vulnerable groups
- Representation or strong presence in the regions of Armenia
- Experience in community-based social entrepreneurship
- Initiatives to establish local incubators in partnership with the private sector
- Proposed projects should be bold, innovative, and transformative, and have potential for replication and scaling up
- Emphasis is given to enterprises that are ripe for scaling up, building on success of the SGP and projects that could bring partnership and leverage additional resources
- Partnerships with local chambers of commerce, trade unions, large scale cooperatives, local public-private organizations and local incubators and accelerators for social good that can offer business advice to women-led enterprises are encouraged
- Consortiums and partnerships will be encouraged.

The project selection process and further implementation remains in line with established SGP standards and procedures. The call is open to the **national** NGOs operating in Armenia.

Budget:

As per the SGP Operational Guidelines, the maximum amount for each grant project should not exceed the limit of **US\$ 150,000** envisaged by the SGP for a strategic project. The winner will be asked to propose a combination of hard and soft interventions, where at least \$100,000 will be allocated to investment into business development (procurement, construction materials, equipment, etc) and at least \$50,000 to supporting the progress of the projects through organizational capacity building, trainings, mentoring and value chain support (marketing, export, packaging, logistics).

Duration:

The duration of each grant project shall not exceed **24 months**, given the nature of projects.

It is strongly advised to hand in project concept notes to the SGP National Coordinator for technical feedback before a full proposal is submitted to the National Steering Committee for review and approval.

Project concepts should be submitted to Hovhannes Ghazaryan, UNDP/GEF SGP National Coordinator in Armenia via email (hovhannes.ghazaryan@undp.org), with a copy to SGP Assistant Svetlana Harutyunyan at svetlana.harutyunyan@undp.org.

The deadline for applications is **September 30, 2019**.